

**ՃԱՌԱԳԱՅԹԱԹԵՐԱՊԻԱՅԻ ԱՉԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԿՐՈԿՈՐԻՉՆԵՐԻ ԵՎ
ԿՈՐԻՉԻ ԱՅԼ ԱՆՈՄԱԼԻԱՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՎՐԱ ԲԵՐԱՆԻ
ԽՈՌՈՉԻ ԵՎ ԱՐԳԱՆԴԻ ՎՉԻԿԻ ԷՔՍՖՈԼԻԱՏԻՎ ԲՋԻՋՆԵՐՈՒՄ
Փարսադանյան Գ.Գ.¹, Չալիսյան Գ.Գ.², Խանգելոյան Ա.Ա.³,
Բախշիսյան Է.Մ.³, Ներսեսյան Ա.Կ.^{3,4}**

¹ Երևանի Մ. Զերացու անվան պետական բժշկական համալսարանի ԳՅԿ, ԶԶ, Երևան

² Երևանի պետական համալսարանի գենետիկայի և բջջաբանության ամբիոն, ԶԶ, Երևան

³ Վ. Ֆանարչյանի անվան Ուռուցքաբանության ազգային կենտրոն, ԶԶ, Երևան

⁴ Վիեննայի բժշկական համալսարանի քաղցկեղի ուսումնասիրման ինստիտուտ, Վիեննա, Ավստրիա

Հետազոտվել է քաղցկեղով 10 կանանց բերանի խոռոչի և արգանդի վզիկի էքսֆոլիատիվ բջիջներում միկրոկորիզների (ՄԿ) և կորիզի այլ անոմալիաների մակարդակը՝ մինչ ճառագայթաթերապիան, ընթացքում և հետո: Տվյալները համեմատվել են հիմնական ցուցանիշների հետ: Որպես բացասական ստուգիչ, օգտագործվել են նույն տարիքի 10 առողջ կանանց ցուցանիշները:

Հայտնաբերվել է ՄԿ և միկրոկորիզ պարունակող բջիջների, նաև որոշ կորիզային անոմալիաների մակարդակի հավաստի բարձրացում հիվանդների բերանի խոռոչի և արգանդի վզիկի բջիջներում՝

համեմատած առողջ կանանց խմբի հետ:

Արգանդի վզիկի բջիջներում ի հայտ է բերվել ՄԿ առաջացման հաճախականության և կորիզային մեծամասնության անոմալիաների հայտնաբերման բարձրացում՝ ճառագայթաթերապիայի ընթացքում և ավարտելուց անմիջապես հետո: Բուժման ավարտից երկու շաբաթ անց գրեթե բոլոր ցուցանիշները գտնվում էին սկզբնական մակարդակի վրա:

Ի տարբերություն արգանդի վզիկի բջիջների ստացած տվյալների, հիվանդների բերանի խոռոչի բջիջներում բուժման ժամանակ հետազոտվող ցուցանիշների վիճակագրական հավաստի բարձրացում չի հայտնաբերվել: